

**«ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԻՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ»**

**Իրազմեց Անուշավան Կ. Դանիելյան, Տպարան կաթողիկոսության մեծի աանն
Կիլիկիո, Անթիլիաս-Լիրան, 1984, ԺԵ+651 էջ:**

Գալուստ Կուկպենկյան հաստատության հայագիտական մատենաշարը հարստացավ միջ-
նադարյան հայերեն ձեռագրերի մի արժեքավոր ցուցակով ևս՝ Անթիլիասի կաթողիկոսարանի
ձեռագրական ոչ մեծ հավաքածուի (223 միավոր) մանրամասն և գիտական բարեխղճությամբ
կազմված սովորաբար նկարագրությամբ, Ցուցակն ունի առաջարան (էջ Է—Ը), ներա-
ծական (էջ Թ—Ժ), շնորհակալիք (էջ ԺԵ), ձեռագրերի նկարագրություն (էջ 1—546), ցան-
կեր (էջ 549—635), տախտակներ (էջ 635—646), հիշատակարան (էջ 647), վրիպակներ և
հավելումներ (էջ 644—650) բաժինները:

Ա. Դանիելյանի ձեռնածականը սկզբից ևեթ տեղեկացնում է, որ ցուցակը կազմված է
քստ ձեռագրերի նկարագրման «Երևանի Մատենադարանի նորագույն և գիտական եղանակի» (էջ
Ժ) և որ խմբագրման ու անհրաժեշտ ցուցումներ ստանալու համար հեղինակն իր աշխատասիրու-
թյունը հրեք անգամ ներկայացրել է իր սիրելի վարպետ և հայրենի ձեռագրագետ Օննիկ Եզան-
նանին: Մեր օրերի լավագույն ձեռագրագետներից մեկի՝ երջանկահիշատակ Օ. Եզանյանի
ստիճակագրության, համարատար, հմուտ ղեկավարության, ամենաբարեխիղճ, մանրակրկիտ խմ-
բագրման և Ա. Դանիելյանի տասնամյա տրանսկրիպցիոն շնորհիվ այս հրատարակությունն ի վի-
ճակի է պատասխանելու հայագիտության ամենաբախտաբեր պահանջներին և լիովին պարզում
է Անթիլիասի հայերեն ձեռագրերի էությունն ու բովանդակությունը: Իսկ նկարագրությամբ
որոշված և լեզանակը անվանի հայագետ, հանգուցյալ Աս. Մնացականյանի ղեկավարությամբ
Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրագետների շուրջ երեք տասնամյակ տևած տրանս-
կրիպցիոն աշխատանքի և ստեղծագործական առողջ բանավեճերի արդյունքն է: Մեծանուն Հ. Տաշյա-
նի օրինակով կազմված ցուցակների համեմատ այս եղանակի ունեցած բոլոր առավելու-
թյունները ներկայացված են Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի Մայր ցուցա-
կի՝ ներածության մեջ (հեղինակ՝ Աս. Մնացականյան): Հայ ձեռագրագիտության այս նոր
մակարդակի համար առավել հատկանշականը հարցերի և դրանց տրված պատասխանների
մաթեմատիկական ճշգրտության հասնող հստակ միօրինակությունն է: Սա շափազանց կարևոր
է հատկապես այն պատճառով, որ մոտ ապագայում մեր ձեռագրագիտությունը կսկսի օգտվել
հաշվիչ մեքենաների ծառայություններից: Իսկ վերջիններս հուսալի աշխատանքի համար
ճշգրտությունն ու միօրինակությունը կարևոր նախապայմաններ են, ուստի և նոր եղանա-
կով նկարագրված ձեռագրերի արտաքին ու բնագրային տեղեկությունների ծրագրավորումից և
մեքենայացումից հետո ուսումնասիրողը, հարյուրավոր ձեռագրացուցակներ² թերթելու և կար-
գալու հոգեմաշ աշխատանքի փոխարեն, կարող է իրեն հետաքրքրող գրչին, ծաղկողին, մա-
տենագրին կամ գործչին վերաբերող բոլոր ձեռագրական տվյալներն ամենակարճ ժամանա-
կում ուսանալ հաշվիչ մեքենայից: Աս. Մնացականյանի մտահղացմամբ այս նոր եղանակով
սովորված և սովորվելիք ցուցակներում զետեղվում են նաև ձեռագրերի գրատեսակների
նմուշ-լուսանկարներ (բնական մեծությամբ), որոնց շնորհիվ մասնագետները կարող են առանց
բնագրերին դիմելու նույնացնել կամ տարբերակել որևէ դարաշրջանի նույնանուն գրիչների
մատյանները, անանուն ձեռագրերը վերագրել այլ գրչերին հայտնի գրիչների և այլն:

¹ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին
Օ. Եզանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթարյան, խմբագրությամբ՝ Ա. Մնացական-
յանի, Օ. Եզանյանի, Երևան, 1984, էջ ԽԶ—ԾԳ:

² Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ե—ԺԸ դդ., հ. Ա, Երևան, 1959,
էջ LXXVII—XCV, հ. Բ, Երևան, 1976, էջ V—XXII. այստեղ ներկայացված է մինչև 1975 թ.
կազմված 355 ձեռագրացուցակ:

Ա. Դանիելյանն ամենայն բարեխղճությամբ թվարկում և ընդգրկում է Անթիլիասի ձեռագրերի մինչև այժմ գոյություն ունեցած համառոտ և մասնակի նկարագրությունները (Վ. Լանգուա, Ն. Ակինյան, Ա. Սյուրմեյան, Վ. Տեմիրճյան), ապա տեղեկացնում, որ հավաքածուն հիմնականում գոյացել է նվիրատվություններից. կազմված է նվիրատուների 6 նրանց ընծայած ձեռագրերի համարներից ցանկ (էջ ԺԱ—Բ), Բ. Կյուլեսերյան՝ 5 ձեռագիր, Գ. Հովսեփյան՝ 4, պոլսեցի Հովհաննես քհ. Մկրյան՝ 13, Նիկողոսյանի հայոց ս. Աստվածածին եկեղեցի՝ 64, ապա՝ 1—2 միավորից կազմված այլ նվիրատվություններ³:

Սպասելի էր, որ XI դ. ի վեր Կիլիկիայում հանգրվանած հայոց կաթողիկոսարանի ձեռագրական հավաքածուն ձևավորված լիներ գոնե կաթողիկոսարանը Հռոմկլայից Սիս տեղափոխելու ժամանակ՝ XIII դ. վերջին, բայց պատմական պայմանները հաճախ աստանդական են դարձրել նաև Սսի կաթողիկոսական աթոռը, ուստի, նրա երրեմնի ունեցվածք մատյանները ևս իսպառ ցրվել են և արժանացել իրենց ստեղծող ժողովրդի ճակատագրին: Բացառություն են միայն երկու ձեռագիր. 1248 թ. Բարձրբերդի ավետարանը (Մ 8՝ հայ մանրանկարական արվեստի գոհարներից մեկը) և 1311 թ. Սսի մայր մաշտոցը (Մ 9): Վերջինս չափազանց ուշագրավ է հայ ծիսարանի զարգացման պատմության համար: Կարևոր արժանիք է նաև ձեռագրի ազատ էջերում արված ժամանակագրական գրանցումների ամբողջությունը, որի շնորհիվ էական շտկումներ են մտցվել XIV—XVIII դդ. Կիլիկիայի հայոց կաթողիկոսների ժամանակագրության և կիլիկիահայության պատմության ժամանակագրական հենքի մեջ: Ըստ գրության ժամանակի Անթիլիասի հավաքածուի պատկերը հետևյալն է. IX—X դդ.՝ 1 ձեռագիր (Մ 164 թերի ավետարանը), XIII դ.՝ 7, XIV դ.՝ 13, XV դ.՝ 18, XVI դ.՝ 13, XVII դ.՝ 55, XVIII դ.՝ 51, XIX դ.՝ 65: Այս ձեռագրերը (նաև՝ ցուցակը) պարունակում են հայ ժողովրդի (հատկապես՝ կիպրահայ գաղութի) և նրա մշակույթի պատմության ավելի քան 400 անփոխարինելի աղբյուր՝ գրության ժամանակի, նախագաղափար և հետագա հիշատակարան:

Իրքան էլ փոքրաքանակ է հավաքածուն, այդուամենայնիվ, պարունակում է հայագիտության գրեթե բոլոր ասպարեզների համար հետաքրքրություն ունեցող նյութեր: Այդ ճյուղերից մեզ համար առավել կարևորը պատմագրությունն է, որին վերաբերող երկերն այնքան էլ շատ չեն: Մովսես Կազանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի»⁴ (Մ 75, XVIII դ.), Մըխիթար Այրիվանեցու «Նոր պատմութիւն» (Մ 154, 1720-ական թթ.), Ներսես Շնորհալու «Ողբ Եղիսիոյ» և Վահրամ Բարունու «Ուտանաւոր պատմութիւն Ռուբինեանց» (Մ 176, XIX դ.), Հովհաննես քհ. Խաչիկյանի «Համառոտ տեսութիւն Հնդկաստանի և Պարսկաստանի հայոց» (Մ 118, 1875 թ.), չհտազոտված և ըստ ամենայնի ուշագրավ գործի հեղինակային օրինակը): Կան նաև թարգմանական պատմություններ. Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմութիւն» (Մ 187, XIX դ.) Միխայէլ Ասորու «Ժամանակագրութիւն» (Մ 138, 1705 թ.) և մի շարք պատմաժամանակագրական մանր գործեր: Առանձին ուշագրության է արժանի XVIII դ. չուտումնասիրված և գրեթե անծանոթ մատենագիր Հովսեփ Զուղայեցու «Քննիկոն» ժողովածուի հեղինակային ինքնագիրը (Մ 154, 1727—1791 թթ.), որի օգնությամբ կարող են պարզվել այլ օրինակներով ևս հայտնի մի շարք պատմական-տեղեկատու ցանկերի աղբյուրագիտական խնդիրները: Ոչ նվազ արժեք ունի նաև Մ 142 ձեռագիրը՝ Անդրեաս Պոլսեցի և Թագեոս Գաղատացի արքեպիսկոպոսների «Օրագիր ձեռնագրութեանց» գործը: Հայ ժողովրդի պատմության ժամանակագրական հենքի և, հատկապես, ուշ միջնադարի գործիչների կենսագործունեության մանրամասների ճշգրտման իմաստով այս կարգի բնագրերի արժեքն անուրանալի է: Անթիլիասի ձեռագրերն այդ առումով արդեն օգտագործվել է (տե՛ս ցուցակ, էջ 423), բայց նրա մանրամասն նկարագրությունը ևս նպաստելու է աղբյուրի շրջանառությանը:

Հավաքածուն անհամեմատ հարուստ է միջնադարյան տաղերգության հուշարձաններով: Ունի XIV—XV դդ. 6 ստվարածավալ գանձարան և 11 շարակնոց, իսկ տարարնույթ ժողովածուների մեջ կան Գրիգոր Մագիստրոսի, Ներսես Շնորհալու, Վահրամ Բարունու, Առաքել Սյունեցու և ուրիշների տաղեր: XVIII դ. տաղերգու Մարտիրոս Ուտումանեցու ժառանգությունն էլ ներկայացված է երեք ձեռագրով (ՄՄ 7—9): Քիչ չեն նաև հանելուկներն, առակներն ու ար-

³ Հ. Մկրյանի արժեքավոր ձեռագրերի մասին հայագիտական գրականության մեջ մինչև այժմ կային սոսկ կցկոտուր ակնարկներ:

⁴ Օգտագործված է համեմատական հրատարակության մեջ. տե՛ս Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն-ի ա տ ու ա ջ ի, Պատմութիւն Աղուանից աշխարհի: Քննական բնագիրը և ներածությունը Վ ար ա գ Ա տ ա ք ե լ յ ա ն ի, Երևան, 1983, էջ 19:

Ասկի ալլ նմուշները: Հավաքածուն հարուստ է պատմական սկզբնաղբյուրների մի ալլ տեսակով ևս՝ նամակ-թղթերով (Գրիգոր Տղա, Դավիթ Քուրայրեցի, Գրիգոր Տոսեորեցի, Ներսես Շնորհալի, Ներսես Լամբրոնացի, Վարդան Արենցի, հայոց տարբեր կաթողիկոսներ և հոգևոր պետեր): Նամակագրության իրև գրատեսակի և XVIII դ. արևմտահայոց պատմության ուսումնասիրության կարևոր աղբյուրներ են նաև Գրիգոր Փեղտմալճյանի Նամականու երեք օրինակները (ՔՅՏ 52, 192, 195): Իմաստասիրությունն արտահայտված է Արիստոտելի, Դավիթ Անշաղթի, Վահրամ Բաբունու, Առաքել Սյունեցու գործերով և մեկնություններով (իմաստասիրական մտքի քննության կարևոր աղբյուրներով), որոնց հեղինակներն են Գրիգոր Արշարունին, Վանական Տավուշեցին, Ներսես Լամբրոնացին, Սարգիս Շնորհալին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Հակոբ Կարնեցին և ուրիշներ: Հավաքածուում կան նաև բժշկագիտական (12 ձեռագիր), քերականագիտական (10), աշխարհագրական (6), տիեզերագիտական և տոմարագիտական (12) և ալլ բնույթի նյութեր, բայց Անթիլիասի մատենադարանն առավել հարուստ է ծիսադավանաբանական ժողովածուներով՝ ժամագիրք, նորհրդատետր, Կանոնագիրք, Ճաշոց, Մաշտոց, Հայամալուրք, Սաղմոսարան, Վարք սրբոց և հարանց, Տոնացույց, Քարոզգիրք և ալլն: Այդ ձեռագրերը ևս, անկասկած, պետք է նպաստեն այս կարգի ժողովածուների առաջացման ու զարգացման պատմության ուսումնասիրմանը:

Ձեռագրերն ու դրանց բովանդակությունն ընթերցողին հասու դարձնելու ամենալավ միջոցը ցուցակի մանրամասն ցանկերն են. անձնանունների, տեղանունների, նյութերի, գրությունների ժամանակագրական, նախագաղափար և հետագա հիշատակարանների, պատառիկ-պահպանակների, գրության վայրերի, դիրքների, ծաղկողների, կազմողների, թուղթ կոդզների, ստացողների, կնքատերերի, կնիքների ժամանակագրական և մանրանկարչության: Այս բոլորը կազմված են մեծագույն բարեխղճությամբ, սակայն, քանի որ որևէ հավաքածու մասնագետին հետաքրքրում է նախ ձեռագրերի և դրանց հիշատակարանների հնությունը, ապա՝ պարունակած նյութերով և, հետո միայն մյուս ցուցանիշներով՝ ավելի ճիշտ կլինե՞ր սկզբից դնել գրությունների ժամանակագրական, նախագաղափար և հետագա հիշատակարանների, նյութերի, ապա՝ մյուս ցանկերը:

Մեր կարծիքով, պատառիկ-պահպանակների ցանկը կազմված է ոչ ճիշտ՝ ժամանակագրական սկզբունքով: Այսպես. Թ—Ժ դդ.—37, 99, 134, 155, 214, որ կնշանակի, թե այս համարն ունեցող ձեռագրերն ունեն IX—X դդ. թվագրվող պատառիկ-պահպանակներ: Հին պատառիկների թվագրումներն ընդհանրապես բավական մոտավոր են լինում, իսկ Անթիլիասի ձեռագրերից պատառիկ-պահպանակ ունեն ընդամենը 25-ը, ուստի ժամանակագրականի փոխարեն պետք էր առաջնորդվել առարկայական (թեմատիկ) սկզբունքով՝ ըստ բովանդակած նյութերի, որը լրացուցիչ աշխատանք չպահանջող և նյութն առավել մատչելի դարձնող է: Օրինակ, «Անետարան ըստ Մատթէոսի. Գ 13—Դ 2 (Ք 37, Թ—Ժ դդ.), Զ 31—2, է 28—30 (Ք 99, Թ—Ժ դդ.), Ի 30—ԻԱ 9 (Ք 155, Թ—Ժ դդ.)» և ալլն: Պարզ է, որ այսպիսի ցանկով ընդգրկված ավելի հեղուկությամբ կգտնենք անհրաժեշտ նյութեր: Առավել ևս՝ աշխարհի բոլոր պատառիկների ու պատառիկ-պահպանակների այսօրինակ ցանկեր ունենալու դեպքում հնարավոր կլինե՞ր նախ պարզել, թե գրանցից որոնք են միևնույն մայր ձեռագրի մաս կազմել, ապա՝ պատճենների ձևով կամ մտովի վերամիավորել այդ մայրերը և, ի վերջո, այդ ամենի հիման վրա ճշգրտումներ անել պատառիկ-պահպանակներ պարունակող ձեռագրերից շատերի ճակատագրի և կրած նորոգությունների մանրամասների մասին (ժամանակ, տեղ, դեմքեր, ձեռագրերի պահպանության և նորոգության օջախներ և ալլն): Կարելի էր առաջնորդվել նաև Մաշտոցի անվան Մատենադարանի Մայր ցուցակի սկզբունքով, որը պատառիկ-պահպանակները ներկայացնում է աղյուսակաձև՝ «ՔՅՏ Ը/Կ, Ք ձեռագրի, էջ ցուցակի, լեզու, բովանդակություն, ժամանակ, նյութ, գրություն, գիր» հարցակարգով (մեր առաջարկածի և վերջինիս հաշտեցված ձևը ևս հնարավոր է):

Լրացուցիչ աշխատանք պահանջող է նաև մանրանկարչության ցանկը, որի մեջ շտրված են Մանրանկարներ ունեցող ձեռագիրներու թիվերը, իսկ մանրանկարները դասակարգված են միայն քրոլորէջեան, լուսանցալին, շինական մեկանով և տպածո դիմանկարները խմբերի, որոնք, սակայն, ուսումնասիրողին քիչ բան են տալիս: Այստեղ էլ նախընտրելին կլինե՞ր նկարներն առարկայական կարգով ներկայացնելը: Մաշտոցի անվան Մատենադարանի ցուցակի համապատասխան ցանկում ճշին կտակարան, նոր կտակարան, Զարդանկարչություն խմբերի և երկրորդի ենթախմբերի (տէրունականք, աւետարանիչք, առաքեալք, ալլևայլք) ներքո ներկարներ ներկայացված են ըստ բովանդակության: Այսպես, «Ուսնլուսլա» նկարը կա ՔՅՏ 157,

158, 206, 212 և այլ ձեռագրերում, որոնց նկարագրությունների մեջ էլ նշված են ձեռագրերի էջերը:

Որոշ ոչ ճիշտ բնորոշումներ ու դասակարգումներ էլ կան նյութերի ցանկում, բայց դրանք աննշան են, ուստի բավարարվենք մի վերջին՝ «Մայր ցուցակ» ձևակերպմանը վերաբերող դիտողությամբ: Նախորդ դարի վերջերին Վիեննայի Մխիթարյաններն իրենց կարևոր նախա-ձեռնությունը կոչեցին «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց» և այս խորագիրը դրեցին իրենց հրատարակած ցուցակների առաջին տիտղոսաթերթերի վրա, իսկ երկրորդ տիտղոսաթերթին դրում էին «Ծուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի վիեննա», «Ծուցակ հայերեն ձեռագրաց արքունի մատենադարանին ի Մյունխեն» և այլն: Այսինքն, վերջիններս առանձին հատորները կամ պրակներն էին ամբողջ շարքի, որի անունն էր «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց» — աշխարհի բոլոր հայերեն ձեռագրերի ցուցակ: Ուրեմն, մայր բառը կիրառվում էր ընդհանուր (сводный, summary) իմաստով, իսկ տպվելիք բոլոր ցուցակները պետք է կրեին և՛ այդ ընդհանուր, և՛ մասնավոր (տվյալ հավաքածուի անունը բնորոշող) դույզ խորագրերը: Հետագայում Բ. Սարգիսյանը Վենետիկի, Ն. Պողարյանը Երուսաղեմի, վերջերս էլ Մաշտոցի անվան Մատենադարանը Երևանի հավաքածուների ցուցակները տպագրեցին «Մայր» բնորոշմամբ, բառն այս դեպքում կիրառելով զլխավոր, հիմնական (геперальный, general) իմաստով: Եթե այս մեծ հավաքածուների ցուցակների համար «Մայր» բառի երկրորդ իմաստի կիրառումն ինչ-որ չափով պատճառաբանելի է (չնայած արժեք պահպանել տաշխանական ըմբռնումն ու նպատակադրումը), ապա Անթիլիասի հավաքածուի համար, մեր համոզմամբ, դիպուկ չէ հատկապես այն պատճառով, որ այս 223 ձեռագիրը ներկա կազմով նկարագրվում է առաջին անգամ՝ համառոտ կամ ուրվագծային հին նկարագրություն չունի:

Մեր դիտողություններն, անշուշտ, ցուցակն առավել կատարյալ տեսնելու ցանկության արգասիք են և չեն կարող ստվեր գցել նրա անուրանալի արժանիքների և այն տքնաշան ու համառ աշխատանքի վրա, որով Անուշավան Դանիելյանը կարողացել է Անթիլիասի ձեռագրերը լավագույն ձևով ի սպաս դնել հայ միջնադարագիտությանը:

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների քննադատ